



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2591

891.990  

---

9-95

394

119

Handwritten scribble



book 963

27639

~~book~~

1906

Jan 12 -

Jan 12

St. Petersburg

# 2003

891-9210

9-95

# ԵՐԵՎ ՈՐ ԶԱՆԵ ԳԱՐԶԻԵ

## ՆՈՒԷՐ ՄԵՆԿԵՆՑ

4626



ՏՊԱՐԱՆ Ա ՄԵՐԻՔ-ՇՈՂՆԱԶՈՐԻՆԱՆ

1880









ուրախաւթիւնից վեր ու վեր էր թուչ կոտոււմ, երբեմն շորերին էր նայում, երբեմն ոտների նոր կոշիկներին և երբեմն էլ գլխարկը վեր առնում և ուրախ-ուրախ նայում, իրան-իրան ծիծաղում, ծափ տալիս, թուչկոտում: Խեղճ Արուանդը դեռ ևս իւր կեանքում այդպիսի նոր և այդպիսի մտքուր շոր չէր հագած:

— Խաչատուր, գիտե՞ս, ես էգուց պէտքէ քաղաք գնամ, այնտեղ աւելի լաւ շորեր կը հագնեմ, ուսումնարանումը կը կարդամ, շատ միրգ կ'ուտեմ, հապա՛ . . . . . ասում էր Արուանդը իւր ամենալաւ ընկերին:

— Արանի՛ քեզ . . . . . այդպէս հա՛ Արուանդ, ուրեմն որ դնաս քաղաք և ինձպէս ընկերներից հեռանաս՝ պէտքէ մոռանաս՝ այնպէս չէ՞:

— Ա՛ս, ես պէտքէ քեզ մոռանամ, չէ՛ որ մենք փոքր ժամանակից սկսած միմեանց հետ ենք ապրել և միմեանց հետ մեծացել: Չէ, չէ այդ մի՛ ստիլ,

իմ՝ մտքիցն ի՞նչպէս կ'ընկնի այն, որ մեր Սմբատի և Անուշի հետ գնում էինք մեր Տախտ հողը և կանաչ խոտերի ու գոյն գոյն ծաղիկների մէջ գլորվում, խաղում, և վազվզում էինք. յետոյ գնում էինք քաղում շուշան, կրծփուկ, եղնարուտ, սիբեխ՝ և շալակած խաղ ասելով, մի կողմից էլ ուտելով տուն էինք դառնում: Ղշմարիտ է շատ եմ ուզում քաղաք գնալ, բայց որ միտքս են ընկնում մեր այս սիրուն աեղերը՝ սիրտս գնալ չի ուզում . . . . .: Մի՛ վախիլ, ասում եմ քեզ, ես կ'երթամ և երբ որ կարդալ ու գրել սովորեմ, անպատճառ քեզ նամակ կը գրեմ:

— Իբրև հիմի դիր չես իմանում, այն օրը իմ հօր մօտ քո դասը չէի՞ր կարդում:

— Ի՛հ, նա ի՞նչ կարդալ էր, ես նոր եմ տառեր ճանաչում. հայրս շատ ժամանակ կրկնում է, որ եթէ քաղաքումը կարդալիս լինէիր՝ հիմա լաւ կար-



դալ կ'իմանայիր, մեր տիրացու Մարկոսն ինքն ի՞նչ գիտէ, թէ քեզ ինչ սովորեցնի—ասում է հայրս:

Երկայքը լուռ ու մունջ նստեցին մի քարի վերայ միմեանց կողքի և աչքները զցեցին գեանին. նոքա մտածում էին և երկուսի երեսն էլ տխրութիւն էր ցոյց տալիս:

— Ի՞նչ տեսնո՞ւ ինչ միտս եկաւ Խաչատուր, վզին փաթաթուելով ասաց Երուանդը, ես կ'երթամ քո հօրը կը խնդրեմ, կ'աղաչեմ, որ քեզ ինձանից չըջոկի, հետս ուղարկէ, որ այնտեղ մենակ չը մնամ, օտարութիւն չը քաշեմ... համ էլ իմ հօր ասածի սէս տգէտ չը մեծանաս:

— Աղաչեսի բաղդ ո՞վ կրտայ ինձ. դու էլ գիդես, որ մենք այնքան կարողութիւն չունենք, որ համ մեր տունը նորանտով կառավարուի, և՛ ինձ համար քաղաք ուղարկեն:

— Մէկ էլ այս որ, շարունակում

էր Խաչատուրը, դու այս օր—եղուց վան նապարհ ես ընկնելու, քո բոլոր պառ ու րաստութիւնը տեսած, իսկ մենք դեռ ոչինչ պատրաստութիւն չունենք. է՛ սիրելի ընկերս, դու ՚ի գուր կ'աշխատես ինձ համար, մի մարդի բանն էլ Եստուած պէտքէ յաջողի, եթէ ոչ զօրով բան չի դառնալ, մի՞թէ գորա վերայ չե ասած, որ «Առազողին տղայ չե ըլել»:

Երի՛ այսպէս անենք. այս տարի գուգնա գործիդ, բայց միւս տարին երբ յետ կը գաս, այն ժամանակ դու էլ ու ես էլ միասին գնանք հօրս խնդրենք, որ ինձ էլ քեզ հետ ուղարկէ. «Արգայ տարին՝ հետը բարին», ասաց Խաչատուրը:

Աղաչես համաձայնելով միմեանց հետ՝ երկայքը տուն դարձան:

Բ.

Միւս օրը Երուանդի հայրը, Քր-



որը, ամենայն բան պատրաստելով  
դարձեց որը ջվախների մէջ, որը մափ-  
նուշի մէջ և փոքրիկ սայլումը լծեցին  
մի լուծ եղը, բաներն էլ սայլակին բար-  
ձեցին, որ ճանապարհ ընկնեն: Այդ  
ժամանակ Արուանդի մայրը նախաձա-  
շիկ էր պատրաստում ճանապարհորդների  
համար և մի կողմիցն էլ սուս ու փուս՝  
կաթիլ-կաթիլ արտասուքը թշերովը  
գլորում էր: Սա դարդ էր անում, տըխ-  
րումէր, որ մինչև մի տարին իւր միակ  
քաղցրիկ որդուն չե պէտքէ տեսներ, թէ և  
փոքրիկ Աննան չէր թողնիլ, տխրել,  
բայց «ամենայն ծաղիկ իւր հոտն ունի»:  
Աննան չէր կարող և Արուանդի տեղը  
բռնել, հա՛մ էլ իւր տեղը. այնպէս՝ ինչ-  
պէս չե կարող վարդը մանուշակ դառ-  
նալ և մանուշակը վարդ: Արուանդի  
մայր Մարիամը մէկ ուզում էր, որ խա-  
փանի որդու քաղաք գնալը, որ չե թող-  
նի իւր որդին հեռացնել, մէկ էլ մը-  
տաբերում էր, որ ուրիշների որդիքը

գնում են ուսում առնում, պատուական  
մարդիք դառնում և իւրեանց ճնողների ու  
ազգի համար պարծանք համարվում:  
Աննան չէր հասկանում, որ իւր Աւա-  
նից պէտքէ բաժանուի, նա մի ճիպոտ  
վերցրած խեղճ եղներին հանգիստ կանգ-  
նել չէր թողնում, սորա գլխին էր խը-  
փում, նորա ոտներին և ինքը ծիծա-  
ղում, ուրախանում, ծափ տալիս:

Սախաձաշիկից յետոյ, Արուանդը  
իւր բարեկամներին, տեսու ճանաչներին,  
և, մանաւանդ, իւր Խաչատուրին հրա-  
ժարական ողջոյնը տուեց. նորա մայրը  
չէր դադարում առատ արտասուք թա-  
փելուց, մինչև որ նա եկաւ գրկեց, փա-  
թաթուեց մօրը և երկու ծծերը համ-  
բուրեց. յետոյ դաճաւ դէպի Աննան,  
որին գժուած սիրում էր, առաւ նորան  
իւր գիրկը և երկու փափուկ թշերը լաւ  
պինդ համբուրեց: Արեխան տեսնելով,  
որ մայրը լալեսէ՝ իսկոյն պատճառը հար-  
ցրեց և իմացաւ, որ իւր եղբայրը գնում է



Տեոու տեղ: Մայրը Ենային գրկած,  
 չորացած կանգնած մնաց, մինչև որ  
 Երուանդը իրանց սայլակի գլխին նրա-  
 տած, ճիպոտը ձեռքին քշելով, իսկ  
 հայրն առաջին անցան գիւղի առաջևի  
 սարը: Երուանդը ողբան Տեոանում էր,  
 այնքան նորա սիրտը փոխվում, փափ-  
 կում էր: Մինչև անգամ աչքերը ար-  
 սասունքով լցվում էր, բայց իրան պա-  
 հում էր. նա հիմայ երանի էր տալի, որ  
 մնացած լինէր զիւղումը, որ այնտեղից  
 չը բաժանուէր. նա կարծում էր թէ ե-  
 ղազունն է, բայց Տեո զՏեոէ համոզուե-  
 ցաւ, որ այդ երազ էր, այլ ճշմարտու-  
 թիւն: Ճանապարհին ամեն մի ծա-  
 նօթ տեղի, ձորի, սարի, քարի մնաս  
 բարով էր ասում իւր մտքի մէջ: «Առ-  
 րեղի է ինձ մի բան է պատահում ճա-  
 նապարհին, կարեղի է քաղաքում հի-  
 ւանդանում, մեռնում եմ և էլ չեմ կա-  
 րողանում այստեղերը տեսնել, մեռակ ես  
 չեմ, օրէնը քանի՛ քանի՛ մարդիկ են

մեռնում, ես էլ նրանցից մինը, ասում  
 էր նա: Հայրը լուռ ու մոռնջ առաջ էր  
 գնում՝ առանց ձայն ծախուեն հանելու,  
 գլուխը կախ գցած. նա մտածում էր  
 իւր որդու մասին, թէ նա ինչպէս ա-  
 ռանց մեծի պէտքէ հասնի քաղաք և  
 ի՞նչ նեղութիւններ պէտք է քաշի այն  
 օտար տեղում: Գրիգորը մենակ և գոր-  
 ծի տէր մարդ լինելով, չօկարողացաւ  
 Երուանդին ինքն անձամբ քաղաք հաս-  
 ցնել, այլ պատուիրեց միայն, որ Փուր-  
 գօնչիկը երեխային հասցնի իւր բարեկամ  
 ուստայ Սարգսին, որը մանրունք ծախող  
 էր և նստում էր այն քարվանսարայի  
 դռան մօտ, ուր Փուրգօնները պէտք է  
 իջևանէին: Եւ այնուհետև թէ ի՞նչ պէտք  
 է անէր Սարգիսը, այդ բոլորը մի  
 առ մի զբաժէր այն նամակի մէջ, որը  
 Երուանդը տանում էր նորան: Բայց  
 բաւական մտածելուց հետոյ լաւկացրեց.  
 «Ոչ՛նչ, աղայ է, թո՛ղ պատիկ ժամա-  
 նակից սովորի նեղութիւններին, որ ի-



մանայ, թէ մի կտոր հաց աշխատելու համար, ի՞նչքան նեղութիւններ ենք քաշում, ի՞նչքան քրտինք ենք թափում, ։

« ԅովհաննէս աղի տղէն որ այնքան մեծութիւններ է ստացել, որ այնքան պատիւների է արժանացել, այդ ի՞նչովն է եղել, եթէ ո՛չ ուսումովը: Աս իւր երեխայութեան ժամանակ քիչ չարչարանք չի քաշել, նորան էլ իմ որդու պէս թողել են օտար տեղ, օտարների մէջ, որ իւր երեխայ ժամանակիցըն աշխարհի հետ կռուի, գլուխը քարը տայ, որ աշխատանքի «ղաղրն», իմանայ, եթէ ո՛չ լաւ ուտի, լաւ ու հանդիստ մանգայ, էգուց էլօր ինձ էլ չի պէտք գալ:»



Արկար և ծուռ ու մուռ ճանապարհն անցնելուց յետոյ, մեր ճանապարհորդները հասան Կարմիր ձորը, ուր շինած

էին մի քանի հատ խանութներ՝ բողբոլին հասարակ, անձոռնի և մէջները խիստ կեղտոտ: Այնտեղ, խանութներում ծախում էին զանազան չիթեր, մրգեր, ցորեն, գարի, դարման, մանրունք և մեծ—մեծ ձմերուկներ ու սելսեր: Գրիգորի «օճօ», անելովն իսկոյն եղները կանգնեցին մի նորաշէն խանութի հասարի (ցանկապատ) մէջ: Խանութպանի աշկերտն էլ եղներն արձակելիս օգնեց և խոտի մեծ կանգնած դէզեց մի խորում խոտ գցեց եղների առաջն ու միասին մտան խանութը:

— Բարի էոյս, Գալիկ ջա՛ն, ասաց Գրիգորն խանութ պանին:

— Այ Բատուժու բարին, բարով հազար բարի. այ մարդ էս ո՛ւրես, որ չես երևում. քանի ժամանակ է քեզ վերայ էի մտածում, թէ, չը լինի թէ այն մարդուն մի բան լինի պատահած: Հալա՛ փառք Բատուժու որ ողջ առողջ ես: Աս էլ, մի ամիս է, որ քա-



զարիցն եկել եմ, բայց տես թէ ի՞նչ  
լաւ լաւ ապրանք եմ բերել է. այն այն  
թաւին չի՞ծ, որի համար ինձ ամեն օր  
պանել ես, այն էլ գլուխ զիւլի, այն էլ  
կանաչ զանգաք. թէ ուրիշ էլ կուզես,  
հարաւթ Աստուած ողորմած է, կարող  
եմ ճարել:

Գրիգորը միայն ժպտելով նայում էր  
առանց պատասխանելու:

— Ես ո՞ւր ես գնում. այն երե-  
խան սփ է...

— Այդ իմ որդին է. եթէ Աստ-  
ուած կը յաջողի՝ քաղաք եմ ուղար-  
կում, որ այնտեղ այսց ուսումնարա-  
նում ուսում առնի:

— Հաս խելօքո թիւն ես անում  
ես ու իմ Աստուածը, բայց չօ մեզ պէս  
չը պէտքի լինի՝ էլ ուսում ենք, էլ  
մեծանում, աշխարհքումս ապրում,  
մանենք գալիս. մեծ—մեծ բրթում ենք,  
բայց ոչ աշխարհն ենք ճանաչում և  
ոչ նորա վերայ ապրող մարդկերանցը:

Կարծում ենք թէ մեր գիւղերն են, որ  
կան և մեզանից աւելի, թէ խելօք թէ  
հասկացող և թէ հարուստ ոչ մի անդ  
չեն գտնվում, բայց երբ որ մանում ես  
Թիֆլիս, էլ ի՞նչ անես, ո՞ւր կամենաս,  
որ չես տեսնում, փողոցներում քեզ այն-  
պիսի մարդիկ են պատահում, որ նրանց  
առաջին մի մրջինի պէս ես երևում:

— Իհարկէ որ այդպէս է, նկատեց  
Գրիգորը:

— Երեխայի անունն ի՞նչպէս է:

— Երուանդ:

— Երուանդ, քանի՞ տարեկան կլինես:

— Ուղիղ բազա քաղին տասը տարիս  
կը լրանայ, ասաց Երուանդը:

— Հիմա որ գնում ես քաղաք,  
վերջը մեծ մարդ դառնալով քո հողն  
ու ջուրը պէտք է մոռանաս այնտեղ մնա՞ս,  
թէ պէտքի դաս ձեր գիւղը լուսաւորելու,  
քո գիւղականների աչքերը բացանե-  
լու...

— Իհարկէ որ պէտք է գամ, չենց



Տիմա էլ ամենեկին չեմ ուզում այստեղից հեռանալ. թէպէտ ես գնում եմ, ոտներս առաջ են գնում, բայց սիրտս գնալ չե կամենում, յետ է մնում, պատասխանեց Արուանդը:

Իսաական ժամանակ նոքա սյտեղ նստոտեցին, մինչև որ խանութպանը շտապով մորթեց իւր թշուրիկ վառիկներից մի լաւը, թեփոեց, եփեց և չէրթրմայ շինեց: Խանութպանի աշակերտը կանչեց Գրիգորին երեխայի հետ խանութ, ասելով՝ որ «հացը պատրաստ է, համեցէք հաց ուտելու», նոքա էլ առանց ուշացնելու վերկացան և ներս մտան: Խանութի կեղտոտ, իւղոտ և թողոտ դախլի վերայ փռել էին մի հին փալաս, վրէն երկու սև և հաստ թխած հաց մի-մի-կտոր պղնձէ աման՝ նոր եփած կերակրից մինչև պռունգները լցրած, թեփշով մի ցամաք պանրի կրտոր: Իսկոյն ամեն միւր բռնեց իւր համար պատրաստած տեղը՝ ջարդած ար-

կղների վերայ: Մեր ճանապարհորդները այնքան քաղցած էին, որ մի քանի բոպէի մէջ բաժինները խժուեցին, պրծան և սկսեցին ամանների տակի մնացորդը ամբողջ ցուցամատով լեզել:

Օրուայ շք ժամանակն էր, ուստի ամեն մէկը քաշուեց իւր տեղը և սկսեց գունդ — գունդ լուերի դէմ պատերազմել, նոցա մէջ թաւալ-զլոր դալ, բայց ճանճերի բազմութիւնն էլ քիչ նեղութիւն չէր տալիս: Գրիգորն էլ իւր ո՞րդու հետ պառկեց շուքաբանի տակ և սկսեց սպասել:— Իսկոյն հարաւային կողմից մի շրխկշրխկոց լսուեցաւ, և այդ պատճառաւ հայրն ու որդին դուրս վազեցին և ուրախութեամբ նկատեցին, որ ձայնը եկող Փուրգօններիցն էր լսվում: Արկուան էլ ուրախութեան ժպիտով միմեանց երեսին նայեցին, որովհետև նա հենց այն պատճառաւ է մնում, որ Արուանդին դէպի քաղաք ճանապարհ գցէ և ինքը



յետ դառնար: Կամաց—կամաց վերջին անգամն էլ խանութը ներս մտան և դեղին քաղցրամիջուկ ձմերուկը, որ խանութպանը կտրատել պատրաստել էր տուել, լաւ կերան, կշտացան, մինչև որ Փուրգօնները կը հասնէին:—Փուրգօնչիկների հետ համաձայնութիւն կապեցին և տանելու բաները մէկի մէջ դարսեցին. մեր փոքրիկ Երուանդը հօրը «մնաս բարով,» ասաց, համբօրեց ձեռքը, նա էլ նորա ճակատը և յետոյ սեղմեց խանութպանի ձեռքը՝ ասելով, «քո տուած խրատները չը պէտքէ մոռանամ,»: Վրիգորը քանի ժամանակ կանգնած նայում էր Փուրգօնների յետևից, մինչև որ անցան դաշտը և մտան անտառը, այն ժամանակ նա էլ մի խոր հոգևոց հանելով և աչքերը թաց, քայլերը ուղղեց դէպի խանութը. դրան մօտի թաղտի վերայ թիկն տուեց և ընկաւ իւր մտքի տունը:

Ըմեն ճնողը այնպէս է լինում

ինչպէս Վրիգորը. նա իւր ձեռքով որդուն ուղարկում է այն հեռու տեղը, օտարութեան մէջ, բայց հեռանալու ժամանակ, կարծես թէ սրտի մի մասը պակասումէ, ուստի սկսում է արտասուքի կաթիլներ գլորել իւր թշերով:

4626

Փուրգօնն սկսեց իւր շնորհքը ցոյց տալ. Երուանդն առաջին անգամն էր Փուրգօն նստում, որին նստելն սկզբում քաղղաւորութիւն էր համարում, մինչև որ ինքն անձամբ փորձեց դորա տատանող և ջարդող յատկութիւնը:

Փուրգօնները երեկոյեան հասան Յամաք Եղեիւրը:

~~Մ.~~

538/56

Երեգակը իւր լուսատու գլուխն արդէն թաղցրել էր մօտադայ ահագին սարերի յետեր և միայն նորա վերջին ոսկեցօծ ճառագայթներն էին խաղում բլուրների և մեծամեծ ուռնիների կատարների վերայ:






ՆՈՒՍ

Հովհաննայի բուպէին ամենքից երջանիկ էր երևում. նա իւր հօտն արել էր Աեռ-  
 —Այլի (սար) դօշերը, գետնին թիկն ստուել և իւր շուին բերանին դրած՝ հեռաւոր տեղերի և ճանապարհորդների վերայ քաղցր ու մեղմ ձայներ սփռում:  
 Այդ բուպէին նա ոչինչ հողս, ոչինչ դարդ չունէր, որովհետև առանց իւր ասելուն՝ Ալազաշն ու Այլթարը, Ռէօվսարն ու Չամբարը..... պտտում էին ամբողջ հօտի շուրջը, որ չըլինի թէ գող կամ գայլ դուրս ընկնի և իրանց տիրոջը վնաս հասցնի:

Տաւարածներն էլ իրանց կովերն ու գոմէշներն էին առաջ արած քշում դէպի տուն: Այլ այդպէս դաշտերն ու հանդերը, լեռներն ու բլուրները դատարկվում էին իրանց զարդերից՝ կովերից և ոչխարներից, հովուի սրնգի ոչխարա—հանդից և տաւարա—հանդից:

Արուակայեցէք Արուանդի դրութիւնը, այս միջոցիս նորա մտքիցն ըն-



243

կաւ քաղաքն էլ, ուսումնարաններն էլ, գիրն էլ ու գիտութիւնն էլ, և միայն նորա հողու մէջ զարթնեցին իւր մանկական քաղցր և անհող օրերի յիշատակները:

«Ախ, երանի այնպիսի բան պատահի, ասաց Արուանդը, որ էլի կիսաճանապարհ յեա դառնամ և գնամ տուն. ասում են որ քաղաքում անասուններ չըկան, ես ի՞նչպէս պէտքէ մնամ առանց իմ պլազուկին (փոքրիկ հորթ):»

Արուանդի համար այդ ժամը ամենից դժուար և անտանելի էր, որովհետև առաջին երեկոն էր, որ նա պէտքէ դիշերն անցկացնէր դուրսը, հեռու իւր ծնողներից և բարեկամներից, օտարների այն էլ թուրքերի մէջ: Ոչ նոցա լեզուն գիտէր և ոչ էլ հասկանում էր, սակայն նոցա ամեն—մի հարցին հաւ և կամ եօխ (ոչ) էր ասում:

Իսեղճ երեխան իրան այնպէս հեռու էր պահում, որ կար-



ծէիր թէ կծելու լինէին: Երուանդը շատ էր իմացել և հենց պատասխել ևս էր թուրքերի քաշած պատիժներին և այդ միմիայն իրանց գողութեան համար: Ա՛հա՛ այդ խոսկ պատճառով նա Փուրղօնիկներէց խորշում—հեռանում էր:

Ե.

Առաջին գիշերը շատ տխուր անցաւ Երուանդի համար: Մինչև կէս գիշեր նորա քունը չէր տանում. մի կողմից գիշերուայ անդուսին և մութ լինելը, միւս կողմից փշող սառը քամին և երբորդ կողմից էլ ահը՝ նորան խիստ անհանգստացնում և խորը մտածմունքների մէջ էին գցում:

Ամբողջ գիշերը Երուանդը չը քնեց. երկար ժամանակ նա Փուրղօնի մէջ պառկած և գլուխը դրած պաշարի խուրջնի վերայ՝ ուշադրութեամբ ա-

կանջ էր դնում Փուրղօնիկների ծառաների քաղցրաձայն երգերին, որ հեան էլ քորում, մաքրում էին ձիանը, միւս կողմից էլ ձիանը ղոբնդ—ղոբնդ ուտում էին առաջներու դարմանն ու գարին անդադար. միմեանց հետ կրօվում և աքացիներ էին ապխտ, միմեանց քաշն ու ականջները պոկում էին: Երբ տեսաւ ծառաներն էլ քնեցին և ամեն ձայն կարուեցաւ, դարձեալ սիրտըն ահ ընկաւ, նա հենց կարծում էր, թէ «հարամիները», իւր շուրջը պատել են և կամենում են իրանց շանչի տակը քաշել—սպանել. երբեմն սիրտ էր առնում, աչքերը բացանում, շունչը փոքրը գցում և ամենայն կողմ լաւ նայում, բայց մի՛մտի մէջ ոչինչ բան չէր տեսնում: Երուանդը երեսը դէպի երկինք դարձրեց և նկատեց, որ շատ տեղեր ամպակոյտերի տակից դուրս են նայում անհամար մեծ ու փոքր աստղեր, որոնց մէջ նա խոկոյն ճանաչեց



այն մեծ աստղը, որ կոչվում է «տաւարա-  
 ծի աստղ», որովհետեւ ամենից շուտով  
 է դուրս գալիւ տաւարը տուն դառնա-  
 լիս, երեկոյեանները, տաւարին ու պա-  
 հողներին լոյս է տալի: Այսպէս բա-  
 ւական ժամանակ անցնելուց մի փոքր  
 էլ յետոյ, մէկ էլ տեսնես աքաղաղը  
 թափ տուեց իւր մեծ թևերը և ծուղ-  
 րուղու կանչեց: Արթնս թէնորա սրը-  
 տի վերայից մի ահագին ծանր քար  
 վերցրին և թեթևութիւն տուեցին՝ ա-  
 զատ կերպով շունչ քաշելու:

— «Օրհնեալ է Աստուած,, փրկե-  
 լինթաց քթի առաջին՝ վախվխելով.  
 «Օրնեալ է Աստուած,, կրկնեց նա.  
 «Տէր Աստուած, զո՛ւ տաս աջողու-  
 թիւն Քո ստեղծածին և զո՛ւր տեղը  
 նորան չը կորցնես:», — Ողջ գիշերը նորա  
 աչքի առաջից չէին անհետանում՝ ոչ  
 իւր մօր պատկերը, մայրը, որ իրան  
 ճանապարհ գցելիս՝ փոքրիկ Աննան գրը-  
 կած նայում էր և լաց լինում՝ և ոչ էլ

Տայրը: Այդ մթնածովում ուրիշ ոչինչ  
 չէր տեսնում, բացի հօրը, որ Փուրգօ-  
 նի յետև յգլխանգնած և մի անձեռքը  
 մէջքին դրած՝ դէպի իւր առաջն էր  
 նայում: Ետևայն դոցանից ոչ մէկի հետ  
 խօսել չէր կարողանում:

Սիրելի մանուկներ, աքաղաղի վի-  
 շերուայ խօսելը՝ դուք էլ զիտէք, որ  
 ուրախացնում է ճանապահողներին,  
 յոյս է տալի հիւանդին, ասելով՝ «մի՛  
 վախենայ, շուտով վրայ կը հասնի բա-  
 րի լոյսը և դու կը մոռանաս քո ցաւե-  
 րըն ու գեշերուայ քաշած նեղութիւն-  
 ները:», Այդպէս էլ աքաղաղի ճայնը  
 Արուանդի սիրտը պնդացրեց, ասելով.  
 «մի քիչ ևս համբերիր, շատին տարել  
 ես, քչն էլ տա՛ր, որովհետև մինչև  
 լուսանալը շատ չէ մնացել:», Իայց չէ,  
 այդ ևս խաբեց նորան, որովհետև դար-  
 ձեալ նայն գիշերն էր և չէր երևում,  
 որ սկտրէ լուսանար. ցուրտն էլ միւս  
 կողմից սկսեց նորան անհանգստացնել:



Վերջապէս Երուանդը իւր փափագին  
 հասաւ—արևելեան կողմն սկսեց կար-  
 մրագունել և այնտեղից փոքր առ փո-  
 քոր լոյսն ամեն կողմերը տարածուել:  
 Առաին հետ երկու հօտ ոչխար ճա-  
 նապարհ ընկաւ դէպի Թիֆլիս. այդ  
 ոչխարները քշում էին հինգ մարդ՝ ա-  
 հագին չոմբախները ուսներին, եափուն-  
 ջին վերներին և գլխներին էլ մի—մի  
 փթանոց գլխարկներ: Աոցա հեռուում  
 էին մի քանի հաս մեծ—մեծ շներ, ո-  
 բոնց ահից ո՛չ գող կարող էր մօտ գալ  
 և ո՛չ գայլ: Ոչխարներն ամառ ժամա-  
 նակ այնքան կերել էին այն գեղեցիկ  
 սարերի անմահական խոտ ու ծաղիկ-  
 ները և խմել սառը ջրերը, որ ամեն—  
 մինը դարձել էր մի—մի մոթալ, բայց  
 ոչ պանրի, այլ իւղի. շատերը մեծ դը-  
 մակները հագիւ էին տանում, այնպէս  
 որ՝ քիչ էր մնում այնքան ծանրութեան  
 տակ յետևի ոտները կտորատուէին:  
 Դիտէ՛ք թէ տարէնը ո՛րքան այդ-

պիսի սուրունք են մտնում այդ Թիֆ-  
 լիս քաղաքի մէջ, բայց ոչ սկիզբն է  
 երևում և ոչ վերջը, մտնում են թէ չէ,  
 այլ ևս ոչինչ չէ երևում, այնպէս՝ ինչ-  
 պէս մի գետ թափուելիս լինէր մի ծո-  
 վի մէջ:

Բացի ասածներից, մի ճիւղոր էլ՝  
 ճին նստած, սանձը բռնած առաջ էր  
 գնում. նա երբեմն յետ էր շուռ գալիս,  
 «ըուր հէ», անում ոչխարներին, որ  
 իրան հեռուեն. երբեմն էլ գլուխը կախ  
 էր գցում, ննջում, այնպէս որ՝ երբեմն  
 գլխարկը վայր էր ընկնում:

Երբ լոյսը վրահասաւ, այն ժամա-  
 մանակ արդէն Երուանդը միամտեց և  
 և նոր բուն մտաւ:



Հենց որ արեգակը ցոյց տուեց իւր  
 լուսաստու գլուխը, ամեն տեղ երևեցաւ  
 շարժողութիւն և կեանք: Այստեղ այն-



քան մեծատարած դաշտեր, ընդարձակ տեղեր կան, որ համարեա՛ լոյսն ու արեգակը՝ անսահման տարածութեան ծայրում միասին են երևում:

Ամենայն կողմերից սկսան երևալ սայլեր, ֆուրգօններ, իշան...: Չոր ճաւապարհը ծածկուած լինելով թանձր թողով, ուստի քամու մեղմիկ փչելը և անհունների շարժողութիւնը առատութեամբ փոշի էին բարձրացնում օդի մէջ և ճանապարհորդների աչքերը թափում, շրերն սպիտակացնում: Մակայն քիչ-քիչ այդ էլ անցաւ և արեգակը իւր վերջին ոյժը հաւաքած՝ սկսեց որքան տաքութիւն ուներ՝ ուղարկել դէպի երկիրը:

Արուանդը երկար ժամանակ քրնած էր. ֆուրգօնը նորան այնքան որորում էր, դէս ու դէն էր զցում, որ աւելի ևս հոգնեցնում, քնեցնում էր:— Վերջապէս զարթեցաւ երեխան բորբոսովին թուլացած և քրանքի մէջ կո-

րած. նա իսկոյն և եթ իւր քաշած տանջանքը մոռացաւ. նա այժմ մի տեսակ գրախառն միջով էր ճանապարհորդում:

Մի երկար շարք ֆուրգօններ ձրգվում էին ուղիղ ճանապարհի երկարութեամբ և մի արհեստական շղթայ կազմում. ճանապարհի այս և այն կողմը տարածվում էին ընդարձակ այգիներ՝ լեամենայն տեսակ պտղատու ծառերով, խաղողի ծառերով և հազար ու մի տեսակ բանջարեղէնով: Այս ու այն այգին արդէն զբկվում էր իւր գեղեցկատես առարկանների մէկից՝ գիւղացիք մեծ ազմուկ—աղաղակներով ժողովում էին իւրեանց աշխատանաց և Աստուծոյ պարգևած քաղցրահամ պտուղները: Արեխաներն ի՛նչպէս աղաղակներով և ուրախութեան բացականչութիւններով վազում էին դէպի գրվանքանոց խնձորները և կապիկների նման չորս ձեռքով մինչև բեռնաւորուած ծառի կատարը



վարում և մի—մի գգուշութեամբ քա-  
ղամ, ամում այն տոգրակի մէջ, որ  
գօտինից քաշ տուած էր թէև նւ ըբ' էլ  
էին գլորվում, բայց այդպիսիներն ա-  
ռանձին ամանների մէջ էին հաւարվում,  
որովհետև այնքան բարձրութիւնից ընկ-  
նելով ջարդ էին ստանում կողքերում  
և պահելու պէտք չէին գալիս: Իրան-  
ցից ոչ հեռու երևող սպիտակ և սև  
խաղողի սղկոյններն այնքան գեղեցիկ  
էին, որ կարծէիր թէ մարգարտի հա-  
տիկներ լինէին շարած:—Այստեղ շատ  
տեղերից ճանապարհը կտրվում էր ջը-  
բանց բներով որոնցմիջով ջուրը խշխշա-  
լով խշխշալով այգիները ջրելով անց-  
նում էր և հեռանում հեռաւոր հողե-  
րին, գիւղերին, այգիներին և բանջա-  
րանոցներին ջուր տալու: X

Ե.

Փոքր ինչ անցնելուց յետոյ՝ հան-

դիպեցան ընդարձակ դաշտերի, ուր փը-  
ռուած արածում էին ոչխարի հօտերը՝  
խրեանց հեռուներնարվ մի քանի հո-  
վիւններ: Հովիւներն այնքան հաստացել  
գիրացել էին, որ խրեանց ընտելան կեր-  
պարանքիցն ընկել և մի նոր տեսք էին  
բռնել. վզերը հաստացել՝ դոմէշի վզե-  
րին էին նմանվում, երեսները կարմրած,  
աչքերը մութ կարմիր թշերի մէջ մայր  
մտած և խրաքանչիւրի ձեռքին մի ա-  
հազին չումբախ՝ երկաթէ բանդերով և  
մեխերով ծածկուած կնդով (գլխով):  
Իոքա այն մարդկերանցից էին, որոնք  
իրանց կեանքի մեծ մասը դուրսն են  
անցկացնում հանդումը, հեռու մարդ-  
կանցից:

— Իստէք, թէ ի՞նչն էր այդ աստի-  
ճան գիրացրել հովիւներին. դորա պատ-  
ճառը օտարների ունեցածը, հարեան  
հովիւների մեծազմակ ոչխարները և  
ամլիկ զառներն էին, որոնց գողանում  
էին և գայլերի պէս ահազին ոչխարը



կոխում—ուտում, մի մասն ալանի և կիսասում, առանց մի կտոր անգամ թողնելու. այդպիսի մարդիկը միւս մարդկանց մէջ դայլերի դէր են խախում: Նորա իրանցը պահում պահպանում են և ուրիշներինը անճետացնում:

Երկինքը ծածկուել էր ամպով և այդ ժամանակ լաւ հով էր փչում:

Միւս կողմը կովերը և գոմէշները ոմանք փափուկ խոտի մէջ նստած որոճում էին, ոմանք արածում էին և ոմանք էլ միմեանց ոյծը փորձում:

Նոցա կարգում զոչարածները փոքրը տեղ էին բռնում. նորա իւրեանց ազգադակներով բոլորի ուշադրութիւնը դէպի իրանց էին քաշում՝ երկու թաբունի գլուխ զոչերի ոյծերը փորձել էին կամենում:

— Ա՛յ, ճէ՛, ճէ՛ ...ը... այ՛ աղէք, թէ կարող էք մի զոչ բերէք մեր թաղի ալ զոչն ճեա կուտացնելու. կանչում էր զոչարածներէց մէկը միւսին:

Միւսներն իսկոյն և եթ չը պատասխանեցին, այլ երկու ընկերները խորհրդակցում էին, թէ ի՛նչ պատասխանեն, ընդունեն, թէ ոչ. ուտաի պառաջներ կարծելով թէ չիմացան՝ հարկադրուեցաւ երկրորդ անգամ կանչելու:

Եւ երկար մտածելը հարկաւոր չէր, նորա շուտով «պատրաստ ենք», պատասխանեցին:

Մի քանի բուպից յետոյ երկու զոչը միմեանց դէմ կանգնած էին. նոցանից մինը մի կովի բարձրութիւն ունէր համարեա՛. կարճ ու ճակատի առաջ արմունկ տուած եղջիւրներով, վիզը բարակ ու երկար, մէջքը բարձր, այդ բոլորը նորան մի այնպիսի պտակեր էին տալի, որ շատերը համարձակութիւն չէին ունենալ նորա ճեա կուտելու. միայն նորա դմովն այնքան մեծ էր, որ գնալու ժամանակ արգելում էր նորան: Իսկ հակառակորդն ունէր չափաւոր հա-



սակ, ուղիղ մէջք և միջակ պտոյտաձև եղջերներ, իսկ ճակատի սպիտակ նրշանը նորան աւելի գեղեցիկ տեսք էր տալի: Առին սկսուեցաւ: Թափալը իւր դիւրաշարժութեամբ այնպիսի հարուածներ էր տալիս հակառակորդին, որ նա մոմոում էր՝ դռնչը լստում և ակամայ դարձեալ շարունակում:

— Զա՛ Թափալ Զա՛ն Զա՛. քիչ է մնացել, որ յաղթես, տո՛ւր, գլուխը պատռի՛, նորա մէջ էլ ոչինչ կարողութիւն չի մնացել, շարունակում էր խրախուսել և սիրտ տալ առաջին խոյարածը: Գէ՛ Զա՛, գէ՛ Զա՛. դու էլ գիտես, որ միայն դորա անհամ մեծութիւնն է, սակայն ամենեկին ջան չունի... :

— Տղորը սուտ է, չը հաւատա՛ս, Խուբլար, դա ի՞նչ է, որ պոզիզ ծայրը չես առնում և գեանին տալի՛ միջից երկու կտոր անում: Տը՛, հունարդ ցոյց տո՛ւր տեսնենք, բղբղում էին միւսները:

— Խոյերը իւրեանց ճակատներն այն-

պէս էին միմեանց խփում և դարձեալ յետ ու յետ գնում և դարձեալ ամենայն ուժով միմեանց խփում, որ կարծէիր նոցա գլուխները քարից լինէին: Բթերից այնքան շատ գոլորչե էր դուրս գալի, որ ցաւական հեռու կանգնած մարդիկն անզամ լսում էին: Տայց կռին այլ ևս շարունակուել չեղաւ. Թափալը յաղթեց և բերանը բացած սկսեց խոկել երեք իւր չափ խոյին:

Փոքր էր մնում, որ տէրերն էլ հետևեին իւրեանց կենդանիներին, սակայն մի քանի ուրիշ սղաններ մէջ ընկան և միմեանցից հեռացրին:

Ը:

Փուրղօմները երբ դուրս եկան այգիներից, ճանապարհի երկու կողմերում գլորուած փիթ ձմերուկներ ու սեխեր, իսկ միւս կողմը, ընդարձակ հողի մէկ ծայրում շինած էր մի անասկ կամ ծածկ,



որի մէջ ապրում էին բոստանչիներ և արևից ու անձրևից պաշտպանվում էին նորա այդ կօկալի տակ: Փուրղօնները կանգնեցրին և մի քանի ճանապարհորդ ու Փուրղօնչիկ մտան բանջարանոցը, որպէս զի ճանապարհի համար բոստան վերցնեն:

— Սալամ—մալիք, ասացին եկողները:

— Ալեքիյիմ—ասլեք, պատասխանեցին բոստանչիները:

— Առ ձմերուկն'ը էլ չունիք, որ ճանապարհին մեզ պէտք գան, շատ շոգ է և տեսնում էք խմելու ջուր ամենևին չը կայ, ասաց Փուրղօնչիկներից մէկը:

— Այս տարի մեր բոստանը շատ լաւ եկաւ, մատաղ է թէ չես հաւատում, այ նրանցից մինը կորիփորձի, եթէ լաւ չի դուրս գալ, ոչ մէկը չ'անես: Առ սխա էլ շատ ունինք, չէս ուզում քաղցրահոտ շամամներ և...:

— Թէ փեշքէշ կ'անես, ի՞նչու չենք ուզել, աւել թիքէն ո՞ւմ փորն է ծակել:

որ մեր փորը ծակէ: Հա՛մ էլ թո՛ղ մեր թողով լի քիթը մի քիչ էլ անուշ հոտ առնի. թո՛ղ մեր քիթն էլ սովորեն, ծիծաղելով նկատեց Արսաղը:

— Աստ'ւմ, վեր կոց և լաւ ձմերուկներից մի տասը հատ քաղիր, սցատեղ էլ ունինք. թո՛ղ որքան կարելի է լաւ լինին, աղայ Մհառլամի համար է, հա՛ջա թ չի՛ դա մշտական մարդ է...

— Օրուջ ա մի, նա ի՞նչ է պառկած, մատով ցոյց տուեց Մհառլամը դէպի պառկածը, չը լինի՞ թէ հիւանդ է:

— Ի՛ հարկէ հիւանդ է, մի ամիսու կէսն անց է կենում, նա դեռ ոչ մի բան չի անում, բայց ինձ հաւատար փող է ստանում. է՛հ, ի՞նչ անեմ, իմ մեղքն է, այժմ էլ ոչինչ չի դառնալ, պիտի անպատճառ և՛ իրան պահպանեմ և՛ օգուտի կէսն իրան տամ:

Այդ մարդիկը թուով չորս էին, որոնցից մէկը պառկած էր մի կեղտոտ և հասարակ անկողնի մէջ, խօսում և



հողով ծածկած ծածկոցի տակ, իսկ միւսների կերպարանքի սև ու դեղնութիւնը, երեսների ցցուած ոսկրները և այրուած դէմքը, ցոյց էին տալիս, թէ դոքա ո՞ր աստիճանի վատ վիճակի մէջ էին:

Ընտով Կասումը վերադարձաւ մի խորջին լի ձմերուկներով:

Քուրդօնները վերջին գիշերը՝ թիֆլիս հասնելուց առաջ, պէտք է անցկացնէին Ալ-Գէթում: Դեռ երեկոյեան էր, որ եղանակն սկսել էր խառնուիլ. խիստ քամի վերկացաւ և սկսեց թողով մարդկանց աչքերը լցնել: Մօտակայ ծառերի ճիւղերի խշխշոցը մինչև երկինք էր հասնում: Երկինքն ամպած լինելով՝ գիշերը շատ մութն էր, այնպէս որ եթէ մատդ մարդու աչք կոխէիր՝ չէր իմանալ: Եսած է «գողն ի՞նչ է ուզում» մութը գիշեր,, «Գայլն ի՞նչ է սիրում, ամպած օր և մութը գիշեր,, այսպիսի գիշերը գողերը բոլորացան աչքածակ գայլերի պէս:

նոքա հենց ուզում էին՝ որ ամեն բան կուլ տան, էլ ոչքի հանգստութիւն չէին տալիս: Ալեքճապէս հաջի — Ջաֆարի բեռը կտրեցին և բաւական մետաքսեա թել տարան, հետն էլ Երուանդի պալարի խորջինը: Իսկոյն հրացանները որտացին և հետևներից մարդիկ վազեցին աղաղակներով, սակայն գողերը իրեանց քաները լաւ էին տեսել. մի կորկէ չափ բան էլ յետ չը թողեցին, այլ առան անհետացան: Ելլ ս՞վ էր գժուել, որ այդպիսի գիշերն աչքը խփեր և սուազակների ձեռքից մահ ստանար:

Միւս օրը երեխան չէր իմանում, թէ ի՞նչ անի, ո՞րտեղից ուտելէք ձարէ... Թէ յի ժամանակ Փուրդօնչիկը կանչեց նորան և թէ, յ ու հաց աուեց, մինչև որ քաղաք հասնեն:





Handwritten text in a cursive script, likely from the 18th or 19th century, appearing on the left page of the open book.






2591

30w. m\$

4769000



20 13



NL0006974



